

**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ԼՈՒՍԱԽՈՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1850-1920թթ.)**

Արեւմտեան Հայաստանի սոցիալտնտեսական, հասարակական-քաղաքական մշակութային կեանքը եւ դրա անբաժանելի մաս կազմող դպրոցի պատմութիւնը ամուր թելքով կապուած է ինչպէս անցեալում, այնպէս էլ պատմական այդ ժամանակաշրջանում գործող տարրեր ընկերութիւնների ու միութիւնների արդասաբեր գործունէութեան հետ: Հետեւաբար արեւմտահայ դպրոցի եւ մանկավարժական մտքի պատմութիւնն ուսումնասիրելիս հնարաւոր չէ շրջանցել այդ կարեւոր բնագաւառի կրթասիրական ծառայութիւններն ու անտեսել նրա ունեցած էափոխիչ գերը դպրոցի, կրթութեան ու լուսաւորութեան զարգացման գործում: Մշակութային ընկերութիւնների զարգացման բուռն շրջանը իրաւամբ համարում է ԺԹ. դարի երկրորդ կէսը, երբ մէկը միւսի ետեւից կրթասիրական եւ բարեգործական նպատակներով կազմաւորուում էին տարրեր միութիւններ, ընկերային կազմակերպութիւններ, ծաւալում դպրոցաշինական, մշակութային-լուսաւորական բնդմնաւոր գործունէութիւն:

Դպրոցապահպանման ու դպրոցաշինութեան դժուարին գործն իր վրայ էր վերցրել արեւմտահայ առաջադէմ մտաւորականութիւնն ու երիտասարդութիւնը, որը, ստեղծելով ընկերութիւնների ու միութիւնների հզօր համակարգ, հասարակական լայն խաւերին հնարաւորութիւն էր ընձեռել առանձին անհատներից ու կրօնապահպանողական վերնախաւից վերցնել դպրոցական ու կրթական գործին անհրաժեշտ ուղղութիւն տալու նախաձեռնութիւնը եւ դրանով իրականացնել դպրոցի ու կրթութեան ժողովրդավարական գործընթացը:

Ցատկապէս մեծ է կրթասիրական-բարեգործական ընկերութիւնների եւ միութիւնների գերը գաւառային դպրոցների հիմնադրման ու պահպանման գործում։ Նրանք, դպրոցներ հիմնելուց բացի, նիւթական օգնութիւն էին ցոյց տալիս կարիքաւորներին, մտահոգուած էին դասագրքերի ու գրքերի տպագրման եւ տարածման, այդ թւում նաև անուս չափահասների անգրագիտութեան վերացման հարցերով։

Մշակութային ընկերութիւնների պատմութեան հարցերն ամենայն մանրամասնութեամբ քննութեան է առել Մխիթարեաններից Հայր Եփրեմ Պօղոսեանը, որը դրանք դասակարգել է հետեւալ կերպ՝ հին շրջան ժի. դարի վերջերից մինչեւ ժթ. դարի առաջին տասնամեակը (Եղբայրութիւններ), երկրորդ շրջան՝ 1810-1908 թուականները (ընկերութիւններ), երրորդ շրջան՝ 1908 թուականից յետոյ ընկած ժամանակաշրջանը, երբ այդ հաստատութիւնները սկսել են կոչուել «միութիւններ»։ Մեր ձեռքի տակ եղած նիւթերի ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ այդ ընկերութիւնների եւ միութիւնների աշխատանքներն աշխուժացել են առաւելապէս ժթ. դարի առաջին տասնամեակներում, երբ հետզհետէ նոր թափ էին ստանում կրթալուսաւորական համընդհանուր շարժումն ու ազգային-քաղաքական ներքին ծառալումները։

Առաջին կազմակերպութիւնը՝ «Արշարունեաց ընկերութիւն»-ը հիմնուել է, Կ. Պոլսում 1812 թուականին։ Ընկերութիւնը վենետիկում Հայր Ղուկաս ինճիճեանի եւ միաբանութեան այլ նույրեալների խմբագրութեամբ լոյս ընծայեց «Դիտակ Բիրդանդեան» երկշաբաթաթերթը, որը նոր առաջընթաց էր հայ մամուլի պատմութեան տարեգորութեան մէջ։

1846 թուականին Կ. Պոլսի թաղում հիմնուեց «Համազգային ընկերութիւն»-ը, որի հիմնական նպատակը հայրենանպաստ ուժերի միաբանութիւնը եւ ազգային շրջաններում դպրոցական ցանցի ծաւալումն ու կրթական գործի զարգացումն էր։ Թուրքական կառավարութիւնը՝ օգտուելով ընկերութեան ներսում սկիզբ առած դաւանաբանական հակամարտութիւններից, դադարեցրեց նրա գործունէութիւնը։

1847 թուականին Կ. Պոլսի Ղալաթիա թաղում իր ազգանուէր գործունէութիւնը ծաւալեց «Անձնուէր ընկերութիւն»-ը,

¹ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», թիւ 11.12, Վենենա, 1951թ., էջ 538-566.

որը գաւառում ունէր իր մասնաճիւղը եւ դպրոցը, որտեղ սովորում էր 700-ից աւելի աշակերտ: Ընկերութեան նպատակն էր բնակչութեան շրջանում վերացնել անդրագիտութիւնը եւ տարածել լուսաւորութիւն:

Նոյն թուականին կ. Պոլսի Օրթագիւղ թաղում հիմնուեց «Վերածնութեան թանգարան»-ը, որը իր գործունէութեան հինգտարիների ընթացքում հաւաքել է աւելի քան 500 տպագիր եւ 38 ձեռագիր մատեաններ:

1848 թուականին կ. Պոլսում ապրող Կեսարիայի հայերի նախաձեռնութեամբ հիմնուեց «Մամիկոնեան ընկերութիւն»-ը, իսկ 1850-ին՝ «Արշակունեան ընկերութիւն»-ը, որոնք նիւթական մեծ օգնութիւն էին հասցնում Կեսարիայի դպրոցներին:

Հետաքրքրութեան արժանի է 1851 թուականին «Բանասէր»-ի առաջ քաշած պահանջը՝ հիմնել հայ մտաւորականների ընկերութիւն, որի գերագոյն նպատակը պիտի լինէր հայկական գիտութեան ճեմարանի հիմնադրումը:

1852-ին կ. Պոլսում, Զմիւռնիայում, Նիկոմիդիայում եւ այլուր հիմնուեցին «Ընթերցասիրաց թանգարաններ»: Ընկերութիւնը ժամանակաւորապէս գործում էր Մայր վարժարանում: Ճարտարապետ Նիկողոս Պալեանը «Ընթերցասիրացի» համար կառուցեց նոր չինք՝ իր գրադարան-ընթերցարահներով: Շուտով գրադարանը հաւաքեց 1000 անուն գիրք:

Դեռեւս 1848 թուականին Նիկողոս Զօրայեանը «Բազմավէպ»-ում առաջ քաշեց հիմնել «Համազգային ուսումնական ընկերութիւն», որի ուսերին էին ծանրանալու համազգային կրթական գործի կազմակերպման խնդիրները, նաեւ նոր դպրոցների հիմնումը, ազգային դաստիարակութեան թերութիւնների վերացումը:

1857-ին Գումագափու թաղում կազմաւորուեց «Եղբայրասիրական խումբը», որի նպատակն էր ձրի դասախոսութիւններ կարդալու միջոցով լուսաւորել ու կրթել «անուս չափահասներուն»: 1858-ին Եւղոկիայում հիմնուեց «Քրիստոսեան ընկերութիւն»-ը, որը օգնութեան ձեռք մեկնեց հիւանդներին, աջակցեց աղքատ ու անապաստան գաղթականներին: Հանրային կրթութեանը զարկ տալու նպատակով 1858 թուականին ստեղծուեց «Մեարիֆի ժողովը», որի հայ անդամներն էին Սերուիչէն, Գասպար Սինապեանը, Բարունակ Ֆերուէհանը եւ ուրիշներ: Այդ շրջանում էր, որ կ. Պոլսի թաղային վարժարանների համար կատարուեց պաշտօնական վիճակագրութիւն, ըստ որի կ. Պոլսում

գործում էր 42 ազգային վարժարան, որտեղ սովորում էր 5531 երեխայ²:

1858 թուականին Կեսարիայում հիմնուեց «Հայկագեան ընկերութիւն»-ը որն իր վրայ վերցրեց «Հայկական վարժարան»-ի ուսումնանիւթական միջոցների մատակարարման գործը:

1860-ին Բրուսայում հիմնուեց «Բրուսայի ուսումնասիրաց ընկերութիւն»-ը, իսկ 1864-ին Խարբերդում՝ «Մմբատեան ընկերութիւն»-ը: Նմանատիպ ընկերութիւններ ստեղծուեցին նաեւ Այնթապում, Կարինում, Մարաշում, Վանում, Հաճընում եւ այլուր:

1870-ին Կ. Պոլսում հիմնուեց «Դպրոցասիրաց»-ը մէկ տարի անց՝ «Վարդանեան ընկերութիւն»-ը, որոնք կրթասիրական-բարեգործական լայն գործունէութիւն ծաւալեցին Կ. Պոլսում եւ հայկական գաւառներում: 1876-ին Կ. Պոլսի Օրթագիւղ թաղում Զարեհ Շիշմանեանը, Արփիար Արփիարեանը, Պետրոս Վասիլեանը, Յովհաննէս Ելլարզեանը եւ Մկրտիչ Փորթուգալեանը հիմնեցին «Արարատեան ընկերութիւնը», որի նպատակն էր արեւմտահայ գաւառներում դպրոցներ բացել եւ այնտեղ ծաւալել ձրի կրթութիւն: Նրանց գործունէութեան կենտրոնը Վասպուրականն էր: Այդ նոյն թուականին Կ. Պոլսում հիմնուեց «Արեւելեան ընկերութիւն»-ը, որը միացաւ «Դպրոցասիրացին» եւ վերանուանուեց «Դպրոցասիրաց-Արեւելեան ընկերութիւն»: Այն որդեգրելով «Արարատեան ընկերութեան» ուղղութիւնն ու նպատակը՝ Մուշում եւ Տարօնում ծաւալեց բարեգործական-կրթասիրական լայն գործունէութիւն:

1879 թուականին Կ. Պոլսում հիմնուեց «Կիլիկեան ընկերութիւն»-ը, որի հիմնադիրներն էին Մինսա Զերազը, Յովհաննէս Արշակունին, Յարութիւն Մոստիչեանը, Հրանտ Ասատուրը: Նրանք դիմեցին Ներսէս պատրիարքին եւ ստանալով վերջինիս աջակցութիւնը՝ Կիլիկիայում ծաւալեցին դպրոցաշնական ու կրթասիրական լայնածաւալ գործունէութիւն: բացեցին դպրոցներ եւ լեռնային այդ նահանգում խթանեցին կրթական գործն ու լուսաւորութիւնը:

ԺԹ. դարի կչսերին եւ ի. դարի սկզբներին Հայաստանի Արեւելեան եւ Արեւմտեան հատուածներում, ինչպէս նաեւ հայ-

² Հնդարձակ օրացոյց Ազգային հիւանդանոցի, Կ. Պոլս, 1901թ., էջ 248-249.

* 1879 թուականին Ներսէս Վարժապետեանի հովանաւորութեամբ այս ընկերութիւնը վերակազմուեց եւ ստացաւ «Կիլիկեան ընկերութիւն» անունը:

շատ գաղութիներում մի շարք մանր բարեգործական ընկերութիւններ խմբաւորուեցին՝ ստեղծելով նորերը դարձան խոշոր կազմակերպութիւններ: Այսպէս, ընդառաջ գնալով արեւելահայեւ արեւմտահայ մամուլի, մասնաւորապէս «Մշակ»-ի կոչերին, 1880 թուականի Յունիսի 1-ին կ. Պոլսում «Արարատեան», «Կիլիկեան», «Դպրոցասիրաց Արեւելեան» եւ «Միութիւն Մանկանց» ընկերութիւնները միաւորուեցին մի ընդհանուր «Միացեալ ընկերութիւն Հայոց» կազմակերպութեան մէջ. այն գործեց մինչեւ ժթ. դարի վերջը եւ քաղաքական անբարենպաստ պայմաններում լուծարուեց 1895 թուականին: Տասներեք տարուայ ընդմիջումից յետոյ՝ 1908 թուականին, այն վերստին բացուեց եւ շարունակեց իր աշխոյժ գործունէութիւնը մինչեւ 1914 թուականը: Նրա գործունէութեան երկրորդ շրջանի յիշատակութեան արժանի գործերից մէկը 1911 թուականին Վանի վարժապետանոցի հիմնադրումն էր:

Միացեալ ընկերութիւնը գաւառներում ստեղծեց իր 16 մասնաճիւղերը: 1884 թուականի վիճակագրական տուեալներով ընկերութիւնը պահում էր 46 դպրոց: Այս մասին տեղեկագիրը արձանագրում է. «Հայոց Միացեալ Ընկերութիւնք միացման թուականին իսկ կը ձեռնարկեն աւելի կանոնաւոր ու աւելի դրական վիճակի մը մէջ դնել գաւառի վարժարանները, անոնց թիւը կրկնապատկելով, եւ գործունէութեան ամբողջ դաշտը կրթական երկու անջատ շրջանակներով բաժնելով՝ Ա. Մեծ Հայք եւ Բ. Կիլիկիա: ... Այս եռուգեռ գործունէութեան հետեւանքով երեք չորս տարուան ընթացքին մէջ, ընկերութիւնը կը հասնի գնահատելի արդիւնքի մը եւ վարժանաններու թիւը կը բարձրանայ 46-ի, որոնց մէջ կը պաշտօնավարէին 115 ուսուցիչ եւ կը սորպէին 2822 աշակերտ եւ աշակերտուհիները»³:

Այդ շրջանում հիմնուել են նաեւ կանանց կրթասիրական-բարեգործական ընկերութիւններ ու միութիւններ: Այսպէս՝ 1879-ին կ. Պոլսում Զապէլ Խանճեանի (Սիպիլ) եւ մի խումբ առաջադէմ կանանց նախաճեռնութեամբ հիմնուեց «Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւն»-ը, որը նպատակ ունէր գաւառներում բացել դպրոցներ եւ այնտեղ ծաւալել կրթասիրական-բարեգործական գործունէութիւն: Այդ նոյն թուականին Սրբուհի Տիւսարի ջանքերով ստեղծուեց «Դպրոցասէր Հայուհեաց ընկերու-

³ Միացեալ Ընկերութիւնների հայոց (1880-1908), եռամեայ տեղեկագիր 21 օգոստոս 1908-1911 օգոստոս 31, Կ.Պոլս, 1912, էջ 10-11:

թիւն»-ը՝ արեւմտահայ գաւառների դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով։ Կ. Պոլսում ընկերութեան ջանքերով հիմնուեց «Դպրոցահրաց վարժարան»-ը։ Նոյն նպատակով բազմաթիւ ընկերութիւններ հիմնուեցին նաեւ հայկական նահանգներում՝ Սեբաստիայում, Վանում, Կարինում, Խարբերդում, Կեսարիայում եւ այլուր։

Հետեւելով Կ. Պոլսի առաջադէմ կանանց օրինակին՝ 1881-ին Թիֆլիսում հիմնուեց «Հայուհեաց բարեգործական ընկերութիւն»-ը, որի գերխնդիրն էր բարեկարգ հիմքերի վրայ դնել կանանց կրթութեան գործը։ Նոյն թուականին այստեղ հիմնուեց նաեւ «Կովկասի Հայոց բարեգործական ընկերութիւնը» բժշկապետ եւ անուանի հասարակական գործիչ Բագրատ Նաւասարդեանի նախաձեռնութեամբ, որին մեծ աջակցութիւն էր ցոյց տալիս Գաբրիէլ Սունդուկեանը։ 1880-ին Թիֆլիսում հիմնուեց եւս մի ընկերութիւն, որը կոչուեց «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութիւն»։ Ընկերութեան հիմնական նպատակը Կովկասում ծաւալուող դպրոցաշնութեան գործին աջակցելն էր։ Այս ընկերութեան նախաձեռնութեամբ տպագրուեցին բազմաթիւ գրքեր ու դասագրքեր (Պատկանեանի բանաստեղծութիւնները, Խորենացու «Հայոց պատմութիւնը», Նահապետեանի «Կենդանաբանութիւնը», Քիշմիշեանի «Բառարանագիտութիւնը» եւ այլն)։

ԺԹ. դարի 50-ական թուականներին Զմիւռնիայում գործում էր երկու բարեկարգ տպարան՝ «Արշալոյս»-ը եւ «Տէտէեան»-ը։ Զմիւռնիայի հայ հասարակայնութիւնը, Մեսրոպեան եւ Հռիփսիմեան վարժարանների կողքին ունեցել է նաեւ բարեգործական ընկերութիւններ, որոնց հիմնադիրները եղել են տեղի կրթուած երիտասարդներն ու օրիորդները։ Զմիւռնիայի կրթասիրական ընկերութիւնների շարքում յիշատակութեան արժանի են՝ Սիւնեաց (1841-1845թթ.), Աղքատասիրաց (1861-1894թթ.), Անձնուէր (1873-1882թթ.), Վահանեան (1874-1878թթ.), Հոգատար Որբախնամ (1879-1900), Հռիփսիմեան կրթասէր (1881-1886թթ.) ընկերութիւնները։

Մշակութային կրթասիրական-բարեգործական ընկերութիւններ ու միութիւններ են հիմնուել նաեւ հայ գաղթօջախներում՝ Հնդկաստանում, Եգիպտոսում, Իրանում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ամերիկայում եւ այլուր։

Այսպէս՝ 1897 թուականին Հայդելբերգում հիմնուեց «Եւրոպական հայ ուսանողների միութիւն»-ը, որը բացի լուսաւորական ու կրթական խնդիրներից հետամուտ էր նաեւ ազգային ազատագրական խնդիրների: Եզիպտոսում գործում էր «Հայ բարեգործական միութիւն»-ը եւ «Հայութեաց միութիւն»-ը, Մանչսոստրում՝ «Հայ Տիկնանց միութիւն»-ը եւ այլն: 1906 թուականին Կահիրէում Պօղոս Նուրբարի ջանքերով հիմնուեց «Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն»-ը, որի բարոյական եւ նիւթական հօգոր աջակցութեամբ կ. Պոլսի «Միացեալ ընկերութիւն»-ը ստեղծեց գաւառային դպրոցների լայն ցանց:

Կրթասիրական ընկերութիւններ ու միութիւններ հիմնուեցին նաեւ բուլղարահայ գաղթօջախներում, մասնաւորապէս՝ Ֆիլիպէ (Պլովդիվ) Հայաշատ կենտրոնում: Ռուս-թուրքական պատերազմից յետոյ այստեղ հիմնուեց «Բարեսիրական ընկերութիւնը», իսկ երկու տարի անց՝ 1880 թուականին՝ «Դպրոցասիրաց ընկերութիւն»-ը, որը երկար տարիներ գործելուց յետոյ կազմալուծուեց եւ ազգին նույիրեց Ս. Գէորգ եկեղեցուն յարակից գեղեցիկ ու արժէքաւոր մի շէնք՝ Սահմանադրական Մասնախումբը, որի նպատակն էր Ֆիլիպէում ամէն տարի հանդիսաւորութեամբ տօնել Ազգային սահմանադրութեան տարեղարձը:

1883 թուականին Ֆիլիպէում հիմնուեց «Գրասիրաց եղբաց րութիւն»-ը: Ընկերութեան նպատակն էր նպաստել հայ հասարակութեան մտաւոր զարգացմանը, իսկ այդ նպատակի իրականացման համար ունէր մատենադարան, ընթերցարան, գիշերային եւ կիրակնօրեայ վարժարան ու լսարան: Ընկերութեան գործառնութիւնները վարում էր ընդհանուր ժողովը եւ վարչական խորհուրդը: Ընդհանուր ժողովը բաղկացած էր ընկերութեան բոլոր անդամներից, իսկ վարչական խորհուրդը՝ ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քուէարկութեամբ ընտրուած եօթ անդամներից՝ ատենապետ, ատենապահը, գանձապահ, գրապահ եւ երեք խորհրդական օգնականներ: Եղբայրութեան պաշտօնական տօնը Ս. Սահակի եւ Մեսրոպի ու Երէց թարգմանչաց տօնն էր: Վարչական խորհուրդը լսարան անուան տակ մասնաւոր ծրագրով պարբերաբար կազմակերպում էր գրական երեկոյթներ եւ հանդէսներ:

ԺԹ. դարի վերջերին Բուլղարահայ համայնքում իր ուրոյն տեղն ունէր մտաւորականութիւնը, որը անդնահատելի դերակատարութիւն է ունեցել համայնքի ազգային ինքնութիւնը եւ գիմագիծը պահելու գործում: Բարեկեցիկ կեանքը հայ համայնքին հնարաւորութիւն է ընձեռել զբաղուել նաեւ դպրոցաշինութիւններին:

Թեամբ: Դարավերջին թուլղարիայի հայաշատ քաղաքներում մէկը միւսի ետեւից բացւում են հայկական երկսեռ վարժարաններ: Այսպէս, Պլովդիվում բացւում է «Վարդանեան-Վառվառեան» վարժարանը, Վառնայում՝ «Սիսակեան»-ը, Ռուշչուկում՝ «Մեսրոպեան» եւ Հոփիսիմեան»-ը, Բորգասում՝ «Հայկազեան»-ը, Սլիւենում՝ «Լուսաւորչեան»-ը, Շումենում՝ «Վարդանեան»-ը եւ այլն: Մշակուում են դպրոցական կանոնադրութիւններ, ծրագրեր, հրապարակուում են հայերէն լեզուով դասագրքեր եւ ուսումնական ձեռնարկներ: Թուլղարահայ գաղութի հասարակական կեանքի աշխուժութիւնը իր հերթին մեծապէս նպաստեց մշակութային-լուսաւորական ընկերութիւնների ստեղծմանը: Այսպէս, 1882 թուականին Վառնայում հիմնուեց «Հայրենասիրաց» ընկերութիւնը: 1883 թուականին նոյն անունով ընկերութիւն է հիմնուում նաեւ Ռուշչուկում: Նոյն թուականին Շումենում հիմնուեց «Ընթերցասիրաց»-ը, Սիլիստրովում՝ «Խնամակալ»-ը, Վառնայում՝ «Սիսակեանը»-ը, Ռուշչուկում՝ «Երիտասարդ ընթերցասիրներ»-ը եւ այլն:

Սոֆիայի թաղային խորհուրդը 1927-ին ստեղծեց «Աղքատախնամ մարմին», որը «ոգի ի բոխն ու խղճի մտօք»⁴ աշխատում էր ամոքել աղքատների ցաւերը, թեթեւացնել նրանց հողսերը, բուժում եւ օգնութեան ձեռք էր մեկնում հիւանդներին եւ անդամալյոցներին, միեւնոյն ժամանակ շաբաթը երկու անգամ անխտիր կերակրում էր հայկական վարժարանների աղքատ ընտանիքների երեխաններին:

«Աղքատախնամ»-ի հասոյթները գլխաւորապէս ստեղծւում էին դրամական ու նիւթական նուիրաստութիւններից, որոնք պարբերաբար հրապարակուում էին ժամանակի տեղական մամուլում, բաժանորդների ամսավճարներից, Գանձանակից եւ պնակից գոյացած գումարներից, օրացոյցների հրատարակութիւններից ստացուած գումարից եւ այլ միջոցներից: «Աղքատախնամ»-ի ատենապետուհին էր տիկին Աղաւնի Յակոբեանը, որի նախաձեռնութեամբ Սոֆիայի վարժարանների աղքատ ուսանողութեան համար շաբաթը երկու անգամ հաստատել էր ձրի սեղանատուն, բացի զրանից Սուլը ծննդեան, Բարեկենդանի եւ Զատկի տօների առթիւ աղքատ ընտանիքներին բաժանում էր քարածուխ (իւրաքանչիւր ընտանիքին 500 կիլոգրամ), միս, բրինձ, հաւկիթ,

⁴ Երկամնայ տեղեկագիր թաղային խորհրդոյ Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ 1928-1930, Սոֆիա, 1930, էջ 15:

շաքարաւագ եւ առաջին անհրաժեշտութեան այլ մթերքներ: «Աղքատախնամ»-ը ազգային վարժարանի աղքատ ուսանողներին ձրի բաժանում էր նաեւ հագուստ, հանդերձանք, ճերմակեղին եւ այլն:

Օսմանեան սահմանադրութեան հոչակումից յետոյ թուրքիայում թէպէտ կարծատեւ, սակայն բուռն վերելք ապրեց ընկերութիւնների եւ միութիւնների կրթանապատ գործունէութիւնը: «Դպրոցասէր»-ը երկարատեւ ընդմիջումից յետոյ, 1908-ին կ. Պոլսում վերաբացեց աղջիկների ուսուցչական սեմինարիան: 1911 թուականին «Ազգանուէր Հայուհեաց»-ը կարինում բացեց նմանատիպ հաստատութիւն, որն ուսուցիչներ էր պատրաստում գաւառական գպրոցների համար: Հիմնուեցին նաեւ սպորտ-մարզական ընկերութիւններ ու ակումբներ, որոնց ակտիւ նախաձեռնութեամբ կ. Պոլսում պարբերաբար կազմակերպւում էին դաշտահանդէսներ, Նաւասարդեան ազգային խաղեր ու մրցումներ: Շաւարչ Քրիսեանի խմբագրութեամբ կ. Պոլսում հրատարակուեց նաեւ «Մարմնամարզ» ամսագիրը (1911-1914թթ.): Բարձր գնահատելով ու արժենորելով մշակութային, կրթական, բարեգործական ընկերութիւնների ու միութիւնների տեղն ու դերը հայ մշակոյթի պատմութեան եւ ազգային դպրոցի ստեղծման ու զարգացման գործում, այսուհանուերձ, գրանց շարքում թէ՛ իրենց գործունէութեան երկարակեցութեան եւ թէ՛ իրենց նախընտրած գործի նկատմամբ ունեցած խանդավառ նուիրուածութեամբ յատկապէս առանձնանում են «Ազգանուէր Հայուհեաց», «Դպրոցասէր Տիկնանց» եւ «Հայոց Միացեալ» ընկերութիւնները, որոնք խոր ակօս քաշեցին մշակութային ընկերութիւնների զարգացման պատմութեան մէջ: Հետեւապէս դրանց պատմութեան հանդամանալից ուսումնասիրութիւնը որոշ չափով կը նպաստի նաեւ ԺԹ. դարի երկրորդ կէսի եւ ի. դարի առաջին երկու տասնամեակներում հիմնուած ընկերութիւնների ու միութիւնների գործունէութեան պատմութիւնը ամբողջացնելուն ու համակարգելուն, քանի որ թէ՛ հետազոտուող նիւթի եւ թէ՛ արծարծուող հիմնահարցի կարեւորութեան առումով այն լուրջ եւ համակողմանի ուսումնասիրութեան կարիք ունի:

1875 թուականի Ապրիլի 11-ին Զապէլ Խանճեանի նախաձեռնութեամբ կ. Պոլսի մի խումբ ուսեալ կանայք հիմնեցին «Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւն»-ը, որը կանանց կրթասիրական-բարեգործական ընկերութիւնների շարքում առաջին անդրանիկ կառոյցն էր: Ընկերութեան նպատակն էր Արեւմտեան

Հայաստանի գաւառներում, մասնաւորապէս, Կիլիկիայում բացել դպրոցներ, խթանել աղջիկների դաստիարակութեան գործը եւ ծաւալել կրթասիրական-բարեգործական գործունէութիւն։ Ընդամէնը հինգ տարուայ ընթացքում ընկերութիւնն արդէն հիմնել էր երեք վարժարան, որտեղ սովորում էր 250 երեխայ։

- 1894-1896 թուականների համիդեան ջարդերից յետոյ բազմաթիւ դպրոցների ու մշակութային, կրթասիրական ընկերութիւնների հետ իր գործունէութիւնը դադարեցրեց նաեւ «Ազգանուէր Հայուհեաց»-ը, որը 12 տարուայ դադարից յետոյ նորից վերաբացուեց 1908 թուականին։ Ընկերութիւնը չուտով հայաբնակ գաւառներում եւ Կիլիկիայում բացեց 17 վարժարան, ուր սովորում էին 3000 ծնողազուրկ եւ կարիքաւոր ընտանիքների աղջիկներ։ Ընկերութեան վարժարանների տարեկան ծախսերը կազմում էր 1500 ոսկի։ Վարժարաններում աւանդւում էին կրօն, բարոյագիտութիւն, առողջապահութիւն, ձեռագործ, կար ու ձեւ առարկաները, նաեւ սովորում էին գորդագործութիւն եւ այլ արհեստներ։ 1912-ին ընկերութեան վարժարանների թիւը հասնում էր 29-ի։ Այստեղ սովորում էր 3000 երեխայ՝ տարեկան 2000 ոսկու բիւջով։ Ընկերութիւնը վարժարաններ բացեց Մանագկերտում, Մուշում, Սասունի Հազզոյում, Թուանջքում (Կարնոյ գաշտ) եւ Կիլիկիայի մերձակայ շրջաններում՝ Ուլնիայում (Զէլթուն), Կապանում, Խառնիում, Թալասում եւ այլ բնակավայրերում։ Այս բոլորից զատ ընկերութիւնը 1910 թուականին կարնոյ մէջ հիմնեց «Վարժուհինոց», որը գործում էր ընկերութեան օժանդակ մասնաճիւղի հսկողութեան ներքոյ։

«Վարժուհինոցում» դասաւանդւում էին հետեւեալ առարկաները՝ եկեղեցական պատմութիւն, հայերէն, թուրքերէն, Փրանսերէն, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, բնագիտութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն, մարմնամարզութիւն, երգ-երաժշտութիւն, տնտեսագիտութիւն, կար ու ձեւ եւ ձեռագործ։

Ուսուցչական մարմինն ունէր հետեւեալ կազմը՝ Գէորգ Աբուլեան, Եւնիկէ Աթքինս, Արսէն Արծրունի, Քաջքերունի Թէրզեան, Գալուստ Կարապետեան, Հայկանուշ Կիրակոսեան, Արամ Ցակորեան, Խոսրով Պապայեան, Աղաւնի Տեսէեան, Մանուէլ Տետէեան, Պողոս Բամպուքեան եւ Հայկանոյշ Օտապաշեան։ 1911-1912 տարեշրջանում «Վարժուհինոց»-ը տուեց իր առաջին 21 շրջանաւարտուհիները, որոնք աշխատանքի անցան տարբեր վարժարաններում։

Գործադիր ժողովը, իր գործունէութեան շրջանակներն ընդարձակելու եւ աւելի շատ նիւթական ու բարոյական աջակցութիւն ստանալու նպատակով, լայն աշխատանք ծաւալեց նոր մասնաճրերի ստեղծման ուղղութեամբ։ Ալեքսանդրիայի եւ Կարնոյ մասնաճրերին կից ստեղծուեցին Զմիւռնիայի (1911թ.), Թալասի (1911թ.), Բէյրութի (1911թ.), Պուքրէշի (1911թ.), Գարատուրայի (1912թ.), Մարաշի (1912թ.), եւ Մշոյ (1913թ.), մասնաճրելերը։

1909-ին Մաքրիգիւղում Բիստենեանի նախաձեռնութեամբ եւ տեղի կանանց անմիջական մասնակցութեամբ, հիմնուեց «Կիլիկեան որբախնամ կանանց ընկերութիւն»-ը, որը մեծ աջակցութիւն ցոյց տուեց «Ազգանուէրին» տարեկան տրամադրելով 70 ուկի. դրա չնորհիւ ընկերութիւնը պահում էր Կիլիկիայի երկու վարժարան եւ Հաճընի Ս. Յակոբականքի որբանոցը։ Բարձր գնահատելով «Ազգանուէրի» կրթասիրական գործունէութիւնը՝ կահիրէի Հ.Բ.Լ. Միութիւնը մշտապէս հովանաւորում էր ընկերութեան վարժարանները, յատկապէս աջակցում եւ ուշադրութեան կիզակէտում էր պահում Կարնոյ «Վարժուհինոցի» աշխատանքները։ Բացի դրանից, նա ընկերութեանը արամադրեց տարեկան 100 ուկի, որպէսզի իր անունով քրդախօս եւ թրքախօս հայ գաւառներում հիմնուեն եւ պահուեն մի քանի իգական վարժարաններ։

Ընկերութեան իրաւասութեան տակ գտնուող բոլոր վարժարանները գործել են կրթական միասնական ծրագրերով։ Այդ մասին տեղեկագիրը արձանագրում է. «Ուսմանց ծրագիրն, որ նոյնն է ամէն վարժարանաց համար, մեծ խնամքով կ'աւանդին ի ձեռն բանիբուն ուսուցչաց եւ ընտիր հանգամանօք օժտեալ դաստիակակուհեաց, որք կ'ուսուցանեն միանգամայն ասեղնագործութեան զանազան ճիշդերն եւ կար ու ձեւի սկզբունքն»⁵։

Գաւառական ու ծայրամասային նախակրթարանների համար նախատեսւում էր այնպիսի յայտագիր-ծրագիր, որի արդիւնական կիրառման դէպքում քիչ թէ շատ լուծւում էր գաւառահայութեան կրթութեան ու լուսաւորութեան հիմնահարցերը։

Մշոյ վարժարանում, ըստ 1910-1912 թուականների երկամեայ տեղեկագրի, սովորում էր 300-ից աւելի դեռատի աղջիկ։

⁵ Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւն, երկամեայ տեղեկագիր 1881-1883, 4. Պոլիս, 1883թ., էջ 10-12։

Վարժարանն ունէր մանկապարտէզ եւ նախակրթարան՝ տարրական, միջին ու բարձր դասընթացներով։ Ընկերութիւնը Մշոյ մէջ ընտրեց իր լիազօր ներկայացուցչին՝ Խարախանեան պրեզիդին։ Վարժարանը դեկապարում էր ուսուցչական մարմինը, որի կազմում ընդգրկուած էին մասնագէտ ուսուցիչ-ուսուցչուհիներ։

Կոփի եւ Շընիքի գիւղական վարժարանները տարրական պարզ նախակրթարաններ էին, որտեղ ուսման ծրագիրը իրականացւում էր դժուարին պայմաններում, դպրոցը անբարեկարգ էր, չկային դպրոցական առողջապահութեան նոյնիսկ ամենատարրական պահանջները բաւարարող պայմաններ։

Կարնոյ դաշտի, Օձնիի, Զիթողի եւ Թուանչքի վարժարանները նոյնպէս տարրական պարզ նախակրթարաններ էին, որոնք գործում էին ընկերութեան տեղական մասնաճիւղի անմիջական հոգածութեամբ։ Սահմանուում էր կրթութիւն աղջիկների համար, իսկ դա արդէն առաջընթաց քայլ էր։

Ույնիայի (Զէլթուն) վարժարանը նախակրթարան էր տարրական, միջին ու բարձր դասընթացներով։ Տարրական նախակրթարանին կից գործում էր նաեւ մանկապարտէզ։ Տեսուչը Զարուհի Փեշտիմալճեանն էր, որի տնօրինութեան տակ էին գտնուում նաեւ կապանի, Ֆռուուզի, Ալպիսթանի եւ Եփսոսի վարժարանները, որոնք, ըստ տեղեկագրի, ունեցել են լաւ առաջադիմութիւն։ Կիլիկիայի ջարդերից յետոյ «Ազգանուէր»-ը ստանձնեց Աղանայի իգական վարժարանների կառավարման գործը։

Հաճընում գործում էր մէկ մանկապարտէզ եւ իգական երեք վարժարան, որոնք նախակրթարաններ էին՝ տարրական, միջին ու բարձր դասընթացներով։ Վարժարանները գտնուում էին փորձառու մանկավարժ Փերունէ Մաղնիսալճեանի տեսչութեան ներքոյ։ Յայտնի է նաեւ, որ Հաճընը Կիլիկիայի ջարդերի ընթացքում ունեցել է 3000 զոհ՝ ունենալով նաեւ հազարաւոր որբեր, կրելով ծանր աղքատութիւն եւ թշուառութիւն։ Այդ պատճառով ընկերութիւնը յատուկ աշխատանք էր տանում այս շրջանի դպրոցների բարեկարգման ուղղութեամբ։

Թալասում հիմնուել էր մանկապարտէզ եւ Վարդ-Պատրիկեան նախակրթարանը՝ տարրական, միջին ու բարձր դասընթաց-

⁶ Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւն, երկամեայ տեղեկագիր 1910-1912, 4. Պոլիս, 1914թ., էջ 31-32։

ներով: Դպրոցը գործում էր Կիւլպէնկեան եղբայրների ծախսերով: 1911-1912 տարեշրջանում վարժարարանում կատարուեցին ոռոշակի փոփոխութիւններ:

Ընկերութիւնն այստեղ ուղարկեց Կ. Պոլսի Նիկողոսեան իդական բարձրագոյն վարժարարանի փայլուն շրջանաւարտ Եւգինէ Կիւրճեանին, որի տեսչութեան տարիներին զգալիօրէն բարձրացաւ վարժարարանի կրթական մակարդակը: Փառանձեմ Քերթմէննեանի ջանքերով զգալի բարեփոխումներ կատարուեցին նաեւ մանկապարտէզների ուսումնադաստիրարակչական աշխատանքներում:

Գարատուրանում գործում էր ընդամէնը մէկ նախակրթարան՝ այն էլ տարրական դասընթացով, որը հիմնել էր ընկերութիւնը 1912 թուականին: Վարժարանի ուսուցչուհին Ովսաննա Թիթեղեանն էր՝ Անթապի ամերիկեան իդական քոլէջի շրջանաւարտներից մէկը, որի պաշտօնավարութեան տարիներին վարժարանը նկատելի յաջողութիւններ ունեցաւ: Նոյնը պիտի ասել կենտրոնագաւառի՝ Մանազկերտի վարժարանի մասին, որն ունէր տարրական դասընթացով նախակրթարան, հիմնուել է 1912 թուականին, այստեղ սովորում էր 40 աշակերտուհի, պաշտօնաւորում էր երկու ուսուցչուհի:

Կիլիկիայի մի՛շարք քաղաքներում (Մարաշ, Հասան Բեյլի, Այնթապ, Հաճըն) գործում էին նաեւ որբանոց-նախակրթարաններ, որոնք նոյնպէս գտնուում էին «Ազգանուէր»-ի հովանաւորութեան ներքոյ: Ընկերութեան աշխատանքները միասնական դարձնելու նպատակով նախակրթարան-որբանոցները կենտրոնացուեցին Մարաշում, Հաճընում եւ Հասան Բեյլիում:

Ինչպէս տեսնում ենք, «Ազգանուէր»-ը իր գործունէութիւնը հիմնականում ծաւալել էր Թուրքիայի այն բնակավայրերում, որտեղ Հայկական դպրոցների բացակայութեան պատճառով հայ բնակչութիւնը գրեթէ ի սպառ վեր էր ածուել թրքախօս եւ քրդախօս զանգուածի:

Իր երկարամեայ գործունէութեան ընթացքում «Ազգանուէր»-ը դպրոցներ բացեց Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի աւելի քան 30 բնակավայրերում: Ընկերութեան շուրջ 100 անդամներ, որոնք ունին մանկավարժական կրթութիւն, դժուարին պայմաններում կարողացան իրագործել իրենց ազգանուէր գործունէութիւնը, ինչպէս ճիշտ նկատել է ժամանակադիրը՝ «Կապանէն հիմա դարձայ ձիւնապատ լեռներու տաժանելի ճամբորդութենէ մը ետք, ուր դացեր էի ամսավերջի քննութիւնն ընելու.

արդիւնքը շատ գոհացուցիչ էր, ութ ամսուան կարճ ժամանակամիջոցին բաղդատմամբ, տեսնելու էր այն թրքախօս պզտիկները 8-10 հիւաք մազերով, որոնք չնորհալիօրէն սանտրուած, մաքուր դրասեղաններու առջեւ նատած աշխարհաբար կարդալու եւ գրելու զբաղած էին: Հապա շինած ձեռագործնին, աժուռ թաշկինակները, իրաւ որ ես չկրցայ արցունքներս զսպել...»⁷:

Այսպիսով, կարող ենք ասել, որ «Ազգանուէր»-ի ջանքերի շնորհիւ 1910-1912 թուականների վիճակադրութեամբ Արեւմտեան Հայաստանում եւ Կիլիկիայում գործել է 30 դպրոց (9-ը՝ Արեւմտեան Հայաստանում, 21-ը՝ Կիլիկիայում) սովորողների ընդհանուր թիւը հասնում էր 2436-ի, իսկ ուսուցիչներինը՝ 24-ի, որից 804 աշակերտ (46 ուսուցիչ) սովորում էր Արեւմտեան Հայաստանում, իսկ 1632 աշակերտ (48 ուսուցիչ)՝ Կիլիկիայում:

«Դպրոցասէր Տիկնանց» վարժարանը իր բնօրիանից բռնադաղթուած եւ Սփիւռքում գործող այն եզակի կրթօջախներից է, որը 40 տարի կ. Պոլսում գործելուց յետոյ իր արդասաբեր գործունէութիւնը եւ սրբազն առաքելութիւնը աւելի քան 75 տարի շարունակում է արտասահմանում: Վարժարանը համաքայլ է ընթացել եւ այսօր էլ շարունակում է համաքայլ լինել հայ ժողովրդի պատմութեան հետ՝ կիսելով նրա անլուր կորուստներն ու ձեռքբերումները:

Վարժարանի երկարակեցութիւնը առաջին հերթին պայմանաւորուած է այն վեհ գաղափարի տեսլականով, որ իրենց առջեւ դրել էին նրա հիմնադիրները՝ յաղթահարելով քաղաքական, նիւթական ու բարոյական տարաբնոյթ խոչընդուներ: Այդ մասին Դպրոցասէրի 120-րդ ամեակին նույիրուած տեղեկագիրը արձանագրում է. «.... Այս յաջողութիւնը կարելի է ձեռք ձգել շնորհիւ անցեալի պատկառելի մտաւորականներու, նույիրեալ տնօրէններու անձնուէր ուսուցիչներու, ձեռնհաս խնամակալներու, եւ հայ ժողովուրդի աննկուն կամքին եւ այս փաղանգին միակամ ու հաւաքական ջանքերուն»⁸:

«Դպրոցասէր»-ը 1863 թուականին հռչակուած Ազգային սահմանադրութեան անմիջական արդիւնքն է, որն իր հիմնադ-

⁷ Նոյն տեղում, էջ 24-25:

⁸ Դպրոցասէր 120-րդ ամեակ TEBROTSASSERE 120 EME ANIVERSAIRE, Փարիզ, 1999, էջ 34:

բոյթներում կարեւոր տեղ է յատկացրել աղջիկների կրթութեան ու դաստիարակութեան գործին: Մինչ սահմանադրութիւնը Արեւմտեան Հայաստանում եւ Թուրքիայի հայաշատ բնակավայրերում գրեթէ անտեսուած էր աղջիկների դաստիարակութեան ու կրթութեան գործը: Սահմանադրական շարժումը մտաւորական կանանց առաջին մտահոգութիւնը դարձրեց կ. Պոլսում հայ կնոջ ազատութեան, իրաւահաւասարութեան ու կրթութեան իրականացման հրատապ խնդիրը: Այդ շարժման առաջին ջահակիրը դարձաւ արեւմտահայ գրական եւ հրապարակախօսական մտքի երեւելի ներկայացուցիչներից մէկը՝ Սրբուհի Տիւսաբը (Վահանեան): Ժամանակի հրամայականն էր պատրաստել կին ուսուցիչներ, որոնք պէտք է մեկնէին Արեւմտեան Հայաստանի գաւառները եւ Թուրքիայի հայաշատ բնակավայրերը բարելաւելու հայ կնոջ բարոյահոգեբանական վիճակը, բարձրացնելու նրա հոգեմտաւոր մակարդակը: Սա է եղել վարժարանի հիմնադիրների գերագոյն նպատակը եւ վարժարանի հիմնական ուղղութիւնը, որն ըստ էութեամբ յաջողութեամբ իրագործուել է:

Վահան Թէքէնանը բարձր գնահատելով կրթասիրական, գթասիրական ու բարեգործական ընկերութիւնների գերը հայ իրականութեան մէջ նկատել է. «Այս քանի մը բարեգործական - բարեգործութի՛ւն նիւթական, կամ բարեգործութի՛ւն կրթական - հաստատովթիւններէն՝ որոնց իւրաքանչիւրն իրեն համար իր գծած շաւզին մէջ գերազանցապէս օգտակար դեր մը կը կատարէ, Դպրոցասէր Տիկնանց ընկերութիւնն է որ ինծի կը թուի, իր նպատակովը, դուրս գալ առօրեայ բարեգործութեան մը շրջանակէն եւ չափով մը մօտենալ մտաւորական բարձրութեան գարգացման նպատակին»:

Այսպէս, 1879 թուականի մայիսի 1-ին կ. Պոլսի Օրթագիւղի Հռիփսիմեան վարժարանի երեք շրջանաւարտ օրիորդներ՝ Նուրիկ Սիմոնեան, Թագուհի Պալթազարեան, Արմաւենի Սահկեան-Մինասեան, դարձան Դպրոցասէր Տիկնանց ընկերութեան հիմնադրման նախաձեռնողները: Նրանք իրենց շուրջ համախմբեցին կ. Պոլսի առաջադէմ տիկնանց՝ Նոյեմի Գարամաճեան, Աննիկ Զայեան, Ակուլինէ Ճելալեան-Պոյաճեան, Անայիս եւ շատ ուրիշներ: Խոկ այդ ազդանուէր գործի անմիջական կազմակերպիչներն էին Ներսէս Պատրիարք Վարժապետեանը, Գ. Ներշապուհը, Նազըլ Վահանը, Սրբուհի Տիւսաբը եւ այլք:

⁹ Հայրենիք, կ. Պոլս, թիւ 1526, 1909թ:

1879 թուականի նոյեմբերի 5-ին Դպրոցահր Տիկնանց ընկերութեան ընդհանուր ժողովի որոշմամբ Օրթագիւղի մի փոքրիկ տնակում ընկերութիւնը բացեց իր վարժարանը, որտեղ տարց տարի աւելանում էր թէ՛ սովորողների եւ թէ՛ վարժուհիների թիւը: 1880-ին սովորողների թիւը 20-ից հասել էր 35-ի: Վարժարանի ուսուցիչները հիմնականում ընկերութեան անդամներն էին, որոնք ձրի կրթում ու դաստիարակում էին հայկական տարբեր գաւառներից եկած աղջիկներին:

«Դպրոցահր»-ը այսօր էլ առաջնորդուում է «Դպրոցը կեանքի համար է» սկզբունքով, որը բնորոշում է ինչպէս վարժարանի կրթադաստիարակչական ուղղութիւնը, այնպէս էլ սահմանում նրա հետեւեալ նպատակը.

«Աղջիկները պատրաստել տիպար կին եւ մայր ըլլալու կոչումին:

- Զանոնք օժտել բոլոր այն ծանօթութիւններով, որոնցմով հնարաւոր պիտի ըլլայ զիոնք ինքնաբաւ դարձնել:

- Ամուր պահպանել անոնց մէջ ազգային ոգին:

- Արթնցնել անոնց մէջ շահագրգութիւնը հանրային պարտականութիւններուն համար¹⁰»:

Վարժարանում դաստիարակութեան այս ոգին աղջիկներին հաղորդում էր օրուայ բոլոր պահերին: Ուսուցման բովանդակութիւնը, ուսումնական յայտագիր-ծրագիրը եւ դպրոցի ներքին կեանքը ներդաշնակօրէն ձգտում էին այս նպատակի իրագործմանը: Մշակուեց նաեւ յասուկ կանոնագրութիւն, ըստ որի ծնողները եւ իննամակալները պարտաւորում էին կատարել վարժարանի հետեւեալ պահանջները.

• Մինչեւ ուսումնական տարուայ վերջ աղջիկները պարտաւոր էին մնալ պարոցում՝ բացառութեամբ հիւանդութեան եւ արտառոց դէպքերի:

• Դպրոցն աւարտելուց յետոյ աղջիկները առնուազն հինգ տարի չափաւոր աշխատավարձով պէտք է աշխատէին հայաբնակ որեւէ գաւառում:

• Պայմանները խախտող ծնողները կամ իննամակալները պարտաւորում էին ընկերութեանը վճարել 12 թուրքական ոսկի՝ փոխհատուցելով երեխաների համար կատարած ծախսերը:

¹⁰ Տեղևկագիր Դպրոցահր Տիկնանց ընկերութեան 1927-1928, Փարիզ, 1928, էջ 17:

• Այն ծնողները, ովքեր իրենց երեխաներին հանում էին առաջին դասարանից, պէտք է վճարէին Յ ոսկի, չորրորդ դասարանից՝ 8, հինգերորդ դասարանից՝ 12 ոսկի: Հարկատուգանալին ընդունած այսօրինակ կարգերը իրենց բուն էութեամբ հետամուտ են եղել աղջիկների կրթութիւնը գարձնել գերնպատակ ու պարտաւորեցնող պահանջ, որ իւրայատուկ էր բոլոր տիպի մասնաւոր դպրոցներին:

«Դպրոցաէր»-ը կ. Պոլսի տիպալին ուսումնական հաստատութիւններից էր, որը պատրաստում էր ուսուցիչներ: Վարժարանի առաջին տնօրէն էլիհաս Զաեկեանի յամառ ջանքերով վարժարանում հիմնուեց երաժշտական ինքնագործ խմբակ: Այնուհետեւ վարժարանի տնօրէն դարձաւ ժամանակի առաջադէմ կանանցից մէկը՝ Նազըլ Վահանը: Նրա խորին համոզմամբ «... հայ ազգին բարձրացումը իդական սեռի դաստիարակութեամբ կրնար իրագործուիլ»: Նազըլ Վահանի մահից յետոյ վարժարանի տնօրինութիւնը ստանձնեց նրա դուստրը՝ Սրբուհի Տիւսաըր, որի օրօք վարժարանը իր ծաղկուն շրջանը ապրեց:

1888 թուականից «Դպրոցաէր»-ը իր գործունէութիւնը մի նոր խանդավառութեամբ ծաւալեց կ. Պոլսի Գումզափու թաղամասում: Վարժարանի կատարած աշխատանքները շուտով պսակուեցին յաջողութեամբ: Շուրջ 300 ուսուցիչներ թողնելով մայրաքաղաքի բարեկեցիկ կեանքը կ. Պոլսից մեկնեցին դէպի գաւառները եւ գիտուկցելով ուսուցչի կոչումը՝ որոշեցին ապրել ու կիսել ժողովրդի ճակատագիրը: Իրենց հերթին վարժարանի շրջանաւարտները կրթական գործին ծառայելու գաղափարով առողջուած նոյնպէս մեկնեցին գաւառները եւ տարիներ շարունակ նուիրուեցին հայ մանուկների դաստիարակութեան ազգանուէր գործին: Այս մասին Եղիսա Տէմիրծիպաշեանը դիպուկ բնութագրում է. «Դաստիարակի գործն արդարեւ դժուարին է. կարի դժուարին է դաստիարակութեան ընկերութեանց գործն, երբ խնդիրն ոչ այնքան ձրի լոյս ծառալելու որքան աղջկանց ձրի մանկավարժութիւն ուսուցանելու վրայ է¹¹»:

1894-1896 թթ. հայկական զանգուածային ջարդերից յետոյ համբուեան բունակալութիւնը բազմաթիւ հայկական դպրոցների հետ փակեց նաև «Դպրոցաէր»-ի դուները: Սակայն 1908-ին Օսմա-

¹¹ Ե. ՏէՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ, Գրական իմաստափական շարժում, կ. Պոլիս, 1883, էջ 68:

նեան սահմանադրութեան հռչակումից անմիջապէս յետոյ, նախկին անդամների եւ համակիրների ջանքերով ընկերութիւնը վերակազմուեց, որն էլ իր հերթին կրկին վերաբացեց վարժարանը:

1909 թուականի Աղանայի ջարդերից յետոյ «Դպրոցակը»-ը իր խնամակալութեան տակ վերցրեց 30 որբուհիների կրթութեան գործը, որոնք յետագայում դարձան մասնագէտ ուսուցիչներ:

1915-ին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արեւմտահայութիւնը ապրեց անասելի ողբերգութիւն: Դպրոցակը Տիկնանց ընկերութեան անդամները ամէնուր հալածուեցին, սակայն վարժարանը բաց պահեց իր դռները եւ պատսպարեց ցեղասպանութիւնից մազապուրծ եղած որբերին: Այսպէս, «Դպրոցակը»-ը պահելով հանդերձ վարժարանը, բացեց նաեւ նախակրթարան ու մանկապարտէդաղկոց՝ իր յարկի տակ ստանձնելով նաեւ որբ աղջիկների խնամակալութիւնը: 1918-ին՝ զինադադարի նախօրեակին, վարժարանը ընդունեց 50 որբուհիներ, որոնց խնամակալեց ու դաստիարակեց բարձր պատրաստակամութեամբ: Նշենք նաեւ, որ վարժարանի տնօրինի պաշտօնը վարում էր այդ շրջանի յայտնի մանկավարժ Պօղոս Գէորգեանը:

«Դպրոցակը»-ի գործունէութեան լաւագոյն շրջանը իւ դարի 20-ական թուականներն էին, երբ վարժարանն ունէր սեփական դպրոցական շնչ Գումգափուռում, որտեղ սովորում էին աւելի քան 335 որբուհի՝ գիշերօթիկ եւ ցերեկային սանուհիների հետ միասին: Այդ շրջանում վարժարանն ունէր մեծ թուով բարձրակարգ ուսուցիչներ: Սակայն 1921 թուականին իզմիրում բռնկուեց մեծ հրդեհ, եւ ազգային շատ արժէքների հետ հրոյ ճարակ դարձաւ նաեւ «Դպրոցակը»-ը: «Հայրենիք» օրաթերթն իր յուլիսեան համարներից մէկում գրում է. «Ներկայ հայ իրականութեան ընդհանուր անորոշութեան մէջ Դպրոցակը Տիկնանց ընկերութիւնը տակաւին դեր մը ունի կատարելիք կրթական կալուածքին վրայ եւ բերել իր օժանդակութիւնը հայ ցեղի զարգացման գործին»¹²: «Ազգ»-ը աւելացնում է՝ «.... Դպրոցակը Տիկնանց ընկերութիւնը 42 տարիներու պատկառելի անցեալ մը ունի իր ետին եւ արդիւնաւոր գործունէութեան մը հետքերը, որոնք երբեք չեն կրնար ուրացուի: Դպրոցակը իրապէս հասցուց բազմաթիւ ուսուցչուհիներ, որոնք գաւառները

¹² Հայրենիք, Կ. Պոլիս, Ցուլիս 31, 1921թ.:

գացին եւ Միացեալի եւ Հայուհեացի վարժարաններուն մէջ պատօնավարեցին խիստ գոհացուցիչ եւ արդիւնաւէտ եղանակով մը¹³: «Կոչնակ»-ը նոյնպէս արձագանքելով այդ օրերի իրադարձութիւններին, գրում է. «Մենք վստահ ենք, թէ չկայ հայ մը, որ ճանչցած չըլլայ ուսման եւ դաստիարակութեան անհրաժեշտ կարեւորութիւնը մեր ազգային բարորութեանը եւ առաջադիմութեանը համար եւ կը յուսանք, թէ ամէն հայ ինչպէս իր ազգային պարտքը կը զգայ տալ որպէսզի անօժիները կերակրուեն՝ նոյնպէս իր պարտքը պիտի զգայ տալ որպէսզի հայ որբուժիներու մարմնի պէտքերուն հետ մէկտեղ հոգացուին նաեւ անոնց իմացական եւ հոգեկան պէտքերը¹⁴»:

1922 թուականին քեմալական զօրքերի առաջնադաշումը եւ իզմիրի աղէտը պարտադրեցին, որպէսզի «Դպրոցասէր»-ը փակի իր հաստատութիւնը: Վարժարանի խնամքի տակ գտնուող որբուժիներին ազգային բարձր իշխանութիւնների հրահանգով, ընկերութիւնը յանձնեց Նիր Խաթ Ռըլլիֆին: Սակայն 1923-ին ընկերութիւնը իր գործունէութիւնը ծաւալեց Յունաստանի Սալոնիկ քաղաքում, որտեղ մէկ տարի գործելուց յետոյ տեղափոխուեց Մարսէլ: 1924-ին վարժարանը վերաբացուեց իր բոլոր բաժիններով՝ մանկապարտէզ, նախակրթարան եւ արհեստանոց: 1926 թուականի Հոկտեմբերի 1-ին ստեղծուեց վարժարանի ընդհանուր վարչութիւն, երին անդամակցում էին՝ Նուրիկ Սիմոնեանը, Թագուհի Պալթազարեանը, Ակուլինէ Մուրատը, Սոֆի Սահաթճեանը եւ Մէրի Թէքէեանը: Վարժարանի տնօրինութիւնը յանձնուեց Վահագն իշգալթեանին, որն աւելի քան 20 տարի զեկավարեց «Դպրոցասէր»-ը: Խսկ 1928-ին «Դպրոցասէր»-ը վերջնականապէս հաստատուեց Փարիզի արուարձաններից մէկում՝ Բենսիում, բարեգործ Տիգրան Քելեկեանի նուիրած յարմարաւէտ շէնքում:

Վարժարանի կեղրոնական վարչութիւնը մշակեց իր նոր ծրագիր՝ կանոնակարգը, որը ճանաչուեց Փրանսիական իշխանութիւնների կողմից: Կեղրոնական վարչութեան գործունէութիւնը արտօնագրուեց 1927 թուականի Հոկտեմբերի 22-ի պաշտօնագրով (թուահամար՝ 161803), իսկ ընկերութեան հրապարակային ճանաչումը՝ հրատարակուեց 1928 թուականի Յունուարին «Journal officiel»-ում:

¹³ Ազգ, 4. Պոլիս, Յուլիս, 1921թ.:

¹⁴ Կոչնակ, 4. Պոլիս, Յուլիս, 28, 1921թ.:

1939թւ. Փարիզեան գործունէութեան շրջանում «Դպրոցաէր»-ը տուեց իր առաջին շրջանաւարտները, որոնց գերակշիռ մասը համալրեց վարչութեան խնամակալութիւնը եւ դպրոցի մանկավարժական ու վարչական մարմինը:

Պատերազմի տարիներին՝ աշակերտների սակաւաթիւ լինելու պատճառով, միայն գործում էր վարժարանի գիշերօթիկ բաժինը, իսկ 1945 թուականին «Դպրոցաէր»-ը պետական արտօնագրով վերածուեց երկրորդական վարժարանի, որի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1948-ին դպրոցական շէնքի ընդհանուր վերանորոգումից յետոյ:

Արտասահմանում «Դպրոցաէր»-ի նիւթական հասոյթները հիմնականում ստացում էին նիր իսթ Ռըլլիֆի եւ Լորտ Մեյրս ֆանտի տրամադրած գումարներից (իւրաքանչիւր որբուհու համար յատկացում էր 100 դոլար), հանգանակութիւններից ու նուիրատուութիւններից, մասնաճիւղի օժանդակութիւննից, հանդէսներից եւ այլ բարեկործական կազմակերպութիւններից:

Արտասահմանում գտնուելու առաջին տարիներին հանգանակութիւններ են կատարուել եգիպտոսում (443 եգիպտական ոսկի), Անգլիայում (1500 ֆրանկ), Արև-Աքերայում (83 անգլիական ոսկի), Լայպշիցում (1065 մարկ) եւ այլուր: Բացի դրանից «Դպրոցաէր»-ին նիւթական օժանդակութիւն են ցոյց տուել նաեւ Փարիզի Տիկնանց միութիւնը (տարեկան 5000 ֆրանկ), Կահիրէի Հայուեկեաց միութիւնը (100 անգլիական ոսկի) եւ այլն: «Դպրոցաէր»-ը մշտապէս կայուն յարաբերութիւններ էր պահպանում օտարեկրեայ մարդասիրական ու բարեգործական ընկերութիւնների, մանաւորապէս, երկու խոշոր կազմակերպութիւնների նիր իսթ Ռըլլիֆի եւ Լորտ Մեյրս ֆանտի հետ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար այցելում էին «Դպրոցաէր»-ին եւ բարձր գնահատում նրա գործունէութեան մարդասիրական առաքելութիւնը: «Դպրոցաէր»-ը գործում է ֆրանսիական երկրորդական վարժարանների (քոլէջի) ծրագրին համապատասխան, բացի նախակրթարանի բոլոր կարգերից, ունի նաեւ լրացուցիչ կարգ, ուր աւանդուում են աշակերտների ընդհանուր զարգացմանը նպաստող գիտութեան ճիւղեր եւ ուսումնական առարկաներ: Վարժարանն ունի հետեւեալ աստիճանները՝ նախապատրաստական բաժին՝ Ա. եւ Բ. դասընթացով, որն աւարտելուց յետոյ աղջիկներն ուսումը շարունակում են վարժարանի Ա. Բ. Գ. Դ. Ե աստիճաններում: Ուսման Ե. աստիճանում աղջիկները ուսումնասիրում են տեսական ու գործնական մանկավարժութիւն:

Նախապատրաստական բաժնում ուսումնական տարեշրջանը բաժանում է երկու՝ վերացման Ա եւ Բ բաժինների (կիսամետակների): Այստեղ դասաւանդում են գիր, գրականութիւն, թուաբանութեան չորս գործողութիւններ, մարմնամարզութիւն, նկարչութիւն, երգ-երաժշտութիւն, հայոց լեզու եւ գրականութիւն, տեսական եւ առեւտրական թուաբանութիւն, բնական եւ բնապատմական գիտութիւններ, առողջապահութիւն, ժամանակակից ընդհանուր եւ հայոց պատմութիւն, եւրոպայի եւ Հայատանի աշխարհագրութիւն, քաղաքացիական կրթութիւն եւ բորյագիտութիւն, գեղագրութիւն եւ գծագրութիւն, ձեւագիտութիւն եւ ասեղնագործութիւն, մարմնամարզութիւն, երգ եւ սոլֆէջոյ, հոգեբանութիւն եւ մանկավարժութիւն առարկաները:

Կ. Պոլսում ծաւալած գործունէութեան շրջանում (1879-1922թթ.) վարժարանը ունէր նախապատրաստական դասարան՝ մէկ տարրուայ դասընթացով, այն աւարտելուց յետոյ սովորողներն իրենց ուսումը շարունակում էին վարժարանի Ա.Բ եւ Գ աստիճաններում:

Նախապատրաստական դասարան ընդունուելու համար սանութիւնները յանձնում էին մուտքի քննութիւն՝ հայոց լեզու, գրականութիւն, ֆրանսերէն, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, բնական պատմութիւն, բնագարեան գիտութիւններ եւ բնական պատմութիւն, գրավարժութիւն, գծագրութիւն, ձայնական երաժշտութիւն, մարմնամարզութիւն, ձեռքի աշխատանք եւ ձեւագիտութիւն առարկաներից:

Նախապատրաստական դասարանում աւանդուում էին կրօնագիտութիւն, հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն, պատմութիւն, քաղաքացիական կրթութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, բնական գիտութիւններ եւ բնական պատմութիւն, գրավարժութիւն, գծագրութիւն, ձայնական երաժշտութիւն, մարմնամարզութիւն, ձեռքի աշխատանք եւ ձեւագիտութիւն առարկաները:

Վարժարանի Ա.Բ.Գ. աստիճաններում, վերը նշուած առարկաներից բացի, աւանդուում էին նաեւ հոգեբանութիւն եւ մանկավարժութիւն, գրահաշիւ (Ա եւ Բ), տիեզերագիտութիւն (Գ) տոմարակալութիւն (Գ), ուռտնին տնտեսութիւն (Գ) եւ առողջապահութիւն (Գ)¹⁵:

¹⁵ Դպրոցակը Տիկնանց ընկերութիւն, տեղեկագիր 1908թ., Հոկտեմբեր 1- 1911 Ապրիլ 30, Կ. Պոլսու, 1911 էջ Ա:

Մեր ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ «Դպրոցաէք»-ի ուսման բովանդակութիւնը, նոյնատիպ վարժարանների համեմատութեամբ, աւելի ընդարձակ է, ուսումնական պլանը եւ առարկայական ծրագրերը՝ ըստ ամենայնի կանոնակարգուած: Աւանդուող 21 առարկաներն իրենց հաղորդած գիտելիքների բնոյթով, նշանակութեամբ ու բովանդակութեամբ դասակարգուած են գրական, գիտական եւ գործնական-կիրառական բաժինների: Շաբաթական ծանրաբեռնուածութեան ժամերի գերակշռութացը յատկացուած է գրական առարկաներին, մի հանգամանք, որը բացայացուած է նաեւ վարժարանի հումանիտար ուղղութիւնը: Նախապատրաստական դասարանում գրական առարկաներին յատկացուած է 16 ժամ, այն դէպքում, երբ գիտական առարկաներին յատկացուած է 5, իսկ գործնական-կիրառական առարկաներին՝ 9 ժամ: Գրական, գիտական ու գործնական-կիրառական առարկաների բաշխուածութեան նոյն յարաբերականութիւնը ցայտուն երեւում է նաեւ վարժարանի Ա., Բ., Գ. աստիճաններում: Գործնական-կիրառական առարկաների շարքին էին դասւում առտնին տնտեսութիւնը, առողջապահութիւնը, գրավարժութիւնը, գծագրութիւնը, ձայնական երաժշտութիւնը, մարմնամարզութիւնը եւ ձեռքի աշխատանքը: Ամենաշատ ժամաքանակը ուսումնառութեան բոլոր տարիներին յատկացուած էր ձեռքի աշխատանքին՝ շաբաթական 4 ժամ, իսկ ընդհանրապէս գործնական առարկաների շաբաթական ընդհանուր ծանրաբեռնուածութիւնը նախապատրաստական դասարանում կազմում էր՝ 9, Ա եւ Բ տարիներին՝ 9, իսկ Գ տարում՝ 13 ժամ:

Վարժարանում հիմնական առարկաների շարքն էին դասւում հոգեբանամանկավարժական հոսքի առարկաները, որոնց յատկացուած էր շաբաթական 6 ժամ ծանրաբեռնուածութիւն: Ապագայ վարժուէին պարտաւոր էր հոգեբանութիւնից ու մանկավարժութիւնից աւարտական քննութիւն յանձնել՝ մանկավարժութեան որեւէ ճիւղի վերաբերեալ գրել եւ պաշտպանութեան ներկայացնել գիտահետազոտական աշխատանք, վարել ցուցադրական (բաց) դասեր, պատասխանել մասնագիտական ստուգուական հարցարանին (ի՞նչ է դասարանային-դաս համակարգը, ի՞նչ է ուսումնական յայտագիրը, ծրագիրը, ի՞նչ է իրենից ներկայացնուած ուսուցման գործընթացը, ի՞նչ է ուսուցման սկզբունք եւ մեթոդ հասկացութիւնները եւ այլն):

Վարժարանում ուսուցուած կապուած էր աշխատանքի հետ: Դպրոցին կից գործուած էր ուսումնաարտադրական արհեստանոց,

որտեղ շաբաթական մէկ օր յատկացւում էր ձեռագործի եւ կարուծելի աշխատանքներին: Աղջիկները ընդունում էին ասեղնագործութեան, կար ու ձեւի պատուէրներ. այսինքն՝ նրանց աշխատանքը կրում էր արտադրական բնոյթ:

Լաւ էր գրուած մարմակրթութեան դասաւանդման դրուածքը: Վարժարանի ուսումնադպաստիարակչական աշխատանքներում կարեւոր տեղ էր գրաւում պարբերականների եւ գրքերի ամէնօրեայ ընթերցումները: Բարձր դասարանցիների համար ընթերցւում էին նաեւ միջազդային կարեւոր հարցեր շօշափող նիւթեր, որոնք նպաստում էին սովորուների աշխարհայեցքի, համոզմունքների ձեւաւորմանը եւ նրանց ճանաչողական հետաքրքրութիւնների գարգացմանը:

Գործում էր նաեւ Սանուց միութեան գրադարանը, որը ինքնուրոյն կազմակերպութիւն էր, ունէր իր յատուկ կառուցցուածքը եւ ծրագիր-կանոնագիրը: Սանուց միութեան ջանքերով աշակերտուհիների համար ամէն շաբաթ անց էին կացւում գրական-գեղարուեստական միջոցառումներ, կազմակերպուում բանավէճեր ու դասախոսութիւններ, որտեղ ելոյթ էին ունենում հանրածանօթ մտաւորականներ ու հասարակական անուանի գործիչները:

1950-1952 թթ. վարժարանի տնօրինութիւնը վարել է Էլիզ Արվագեանը, իսկ՝ 1954-1981թթ. այդ պաշտօնը բարձր պատասխանատուութեամբ վարել է Հոկիսիմէ Գարագաչեանը եւ նրա պաշտօնավարութեան տարիներին «Դպրոցահեր» ապրել է ծաղկուն ըջան:

1982-ին վարժարանի տնօրինութիւնը ստանձնել է Սիլվա Գարակոցեանը: Նոյն տարում վարժարանում բացուեց երկսեռ մանկապարտէզի բաժինը, սահմանուց նաեւ փոխադրական միջոցների դրութիւն, որը Կսարաւորութիւն ստեղծեց, որպէսզի հեռաւող արուարձաններից վարժարան յաճախեն աւելի մեծ թուով հայ աղջիկներ:

1988-ին վարժարանի նախակրթարանի առաջին դասարանը (CP), պահանջուած պայմանները լրացնելուց յետոյ, ֆրանսիայի կրթութեան նախարարութեան կողմից ստացաւ համապատասխան պայմանագիր (contrat simple): Նախակրթարանի միւս 3 դասարանները կրթութեան նախարարութեան հետ համապատասխան պայմանագրեր կնքեցին 1992-1994 թուականներին: Հինգ

այս շրջանում էլ վերջնականապէս դադարեց գործել վարժարանի գիշերօթիկ բաժինը:

1996 թուականին վարժարանի միջնակարգ բաժնի առաջին դասարանը (6ème- վեցամեայ), իսկ 1997-ին երկրորդ դասարանը (5ème- հինգամեայ) կրթութեան նախարարութեան կողմից ստացաւ պայմանագիր՝ contrat ASSOCIATION-ը: 1998 թուականին ֆրանսիայի կրթութեան նախարարութիւնը անցկացրեց մանկավարժական եւ վարչատնտեսական մանրազնին ստուգումներ, որից յետոյ «Դպրոցասէր»-ը հաւատարմագրուեց եւ միաժամանակ ապահովեց միջնակարգի երրորդ դասարանի (4ème- չորսամեայ) պայմանագիրը:

1997 թուականին «Դպրոցասէր»-ը լոյս ընծայեց մանկական գրքերի առաջին, իսկ 1999-ին երկրորդ հրատարակութիւնները: Աշակերտների նախաձեռնութեամբ լոյս տեսաւ վարժարանի առաջին, պատմական նշանակութիւն ունեցող ձայնասկաւառակը CD-ն:

Իր 125-ամեայ պատմութեան ընթացքում «Դպրոցասէր»-ը տուել է բազմավաստակ ուսուցիչների ու տնօրինների մի պատկառելի դարակազմիկ սերունդ: Իր գործունէութեան առաջին շրջանում (1879-1924թթ.) վարժարանում իբրեւ ուսուցիչներ ու մանկավարժներ աշխատել են անուանի մտաւորականներ՝ Եղիշէ Արք, Դուրեանը, Դանիէլ Վարուժանը, Սիակիլը (Զապէլ Աստուր), Տիգրան Զէոկիլրեանը, Յովհաննէս Հինդլեանը, Յովհաննէս Գուրգէնը, Միհրան Յովհաննիսեանը, Գարեգին Գաւաֆեանը եւ այլք:

Դպրոցասէր Տիկնանց ընկերութեան կազմում իբրեւ խնամակալուհիներ իրենց եռանդուն գործունէութեամբ աչքի են ընկել Սրբուհի Կուրտիկեանը, Երմոնէ Ռուբէնը, Մանիկ Խոջասարեանը, Զարուհի Պահրէն, բանաստեղծուհի Անալիսը (Եւփիմէ Աւետիսեան) եւ ուրիշներ: 40 երկար ու ձիգ տարիներ ընկերութիւնը բացառիկ հետեւողականութեամբ ղեկավարել է «Դպրոցասէր»-ի շրջանաւարտ Ակուլինէ Ճելալեան-Պոյաճեանը՝ ազգային նկարագրի տէր մի կին, որը բազմիցս Եղել է Միացեալ նահանգներում եւ Միջին Արեւելքի երկրներում, կազմակերպել է հանգանակութիւններ, ապահովել ոչ միայն ընկերութեան նիւթական վիճակը, այլև վարժարանի աշխատանքներն ու սանուհիների բարեկեցիկ կեանքը:

Արտասահմանում վարժարանի ուսուցչական մարմինը համալրել են այդ շրջանի երեւելի կանյքը ու մտաւորականներ՝ թագուհի Անեմեան, Լուիզ Փափառեան, Էլիզ Հազարապետեան, Սիլվա Էլմասեան, Սոնա Վրթանէսեան, Անի Կարմիրեան, Ահարոն Տատուրեան, Մկրտիչ Պարսամեան, Աշոտ Պատմագրեան, Հրանդ Աճեմեան եւ ուրիշներ:

Իր պատմական զարգացման տարբեր շրջաններում «Դպրոցակար»-ը ունեցել է տնօրինութեան մի քանի շրջան՝ կերտելով տնօրին մանկավարժների մի փառահեղ բոյլ՝ Պողոս Գէորգէան, Վահագն Իշգալցեան, Թովմաս Պոյամեան, Էլիզ Այվազեան, Հռիփսիմէ Գարագաչեան, Կարապետ Տագէսեան, Սիլվա Գարակուլեան, որոնք իրենց անսահման նուիրումով, աննկուն նկարագրով եւ ազգային կերտուածքով դասական օրինակ են եղել վարժարանի գալիք սերունդների համար:

«Դպրոցակար»-ը այսօր 125 տարեկան է եւ դա մեծ յաղթանակ է նրա համար, քանի որ շարունակում է գոյատել ու վառ պահել յոյսի եւ լոյսի այս տաճարը: Նրա անցեալը հարուստ է հայ ժողովրդի համար ողբերգական իրադարձութիւններով, երբ այդ դժնդակ օրերին Օսմանեան կայսերապետութեան լծի տակ վարժարանը գերազոյն նպատակ ունէր ուսուցիչներ պատրաստել արեւմտահայ գնաւառների համար եւ հայ մանուկներին տալ առողջ ու հայեցի դաստիարակութիւն, որպէսզի Սփիւռքի նորահաս սերունդը դառնայ իր լեզուի ու մշակոյթի արժանի կրողը՝ քաջ գիտակցելով, որ հայակերտման ու հայապահպանման միակ երաշխիքը լեզուն ու մշակոյթն է:

Նոյն առաքելութեամբ ԺԹ. դարի 80-ական թուականներից իր լուսաւորական եւ կրթամշակութային գործունէութիւնը ծաւալեց նաեւ Հայոց Միացեալ ընկերութիւնը:

1880 թուականի Յունիսի 1-ին ընդառաջ գնալով արեւմտահայ ու արեւելահայ մամուլի եւ համայն հայութեան կոչերին՝ Արարատեան, Դպրոցակար-Արեւելեան եւ Կիլիկեան ընկերութիւնները միաւորուեցին ու ստեղծեցին Հայոց Միացեալ ընկերութիւնը, որը 1895-ին դադարեցրեց իր գործունէութիւնը. տասներեք տարուայ ընդմիջումից յետոյ կրկին վերաբացուեց կ. Պոլսում (1908թ.) եւ ծաւալեց բեղմնաւոր գործունէութիւն մինչեւ 1914 թուականը: Այդ մասին ընկերութեան տեղեկագիրը արձանագրում է. «Հայոց Միացեալ ընկերութիւնը, հայութեան նման, փառաւոր անցեալէ մը յետոյ պահ մը շղթայական բանտարկուե-

ցաւ, ու հիմա ձերբազատուած, նոր եռանդով նոր ոգով մը ասպարէզ իջած է այս գերագոյն կոչը ուղղելու ամէն անոնց, որոնք գիտակցութիւն ունէին պարտաճանաշօւթեան ու զոհաբերութեան իրենց բաժինը բերելու վերաշինումի այս գերազանցօրէն անհրաժեշտ պահանջին ու գործին»¹⁶: Սոյն նպատակն իրագործելու համար ընկերութիւնը բացեց նախակրթարաններ, վարժապետանոցներ ու վարժուհինոցներ, նաեւ գիւղատնտեսական, արհեստագիտական եւ երկրագործական վարժարաններ, դասընթացներ ու լսարաններ՝ ստեղծելով դասաւանդման իրայատուկ ծրագրեր ու դասագրքեր, որի չնորհիւ 1910 թուականին Միացեալ ընկերութիւնը հիմնել էր «56 վարժարան, 5097 երկսեռ աշակերտներով եւ ստանձնած էր Կիլիկեան ճ որբանոցներում դասագիրքերու ու դպրոցական պիտոյից հայթալիթումը, ուր պատսպարուած են 719 որբեր: ... Միացեալի վարժարաններու մէջ էր պաշտօնավարեն 195 ուսուցիչ, ուսուցչուհի եւ պաշտօնեաններ»¹⁷:

Ընկերութիւնը ստանձնել էր նաեւ Կիլիկիայի ճ որբանոցների դասագրքերի ու գրենական պիտոյիքների հայթայթման եւ մատակարարման գործը: Որբանոցներում կար 719 երեխայ, որոնք տեղաբաշխուած էին Աղանայում (74), Հաճընում (180), Տէղթէոլում (104), Մարաշում (68), Աղնթապում (96) եւ Հասան Բեյլիում (97): «Միացեալ»-ի վարժարանները գլխաւորապէս գտնուում էին Տարօնի, Սատունի, Սղերդի, Կարինի, Դերսիմի եւ Կիլիկիայի Մըջաններում, որտեղ աշխատում էր աւելի քան 200 ուսուցիչ:

Կարնոյ գաւառի վարժարանների համար ընկերութիւնը ընդհանուր տեսուչ նշանակեց գիտնական-մանկավարժ Միքայէլ Մինասեանին, որը զգալապէս նպաստեց վարժարանների բարելաւմանը, ապա գործն առաւել արդիւնաւէտ դարձաւ Ստեփան Շեհերեանի տեսչական աշխատանքի չնորհիւ: Համագործակցելով Սանասարեան վարժարանի հետ՝ «Միացեալ»-ը ծրագրել էր բացել նաեւ գիւղատնտեսական վարժապետանոց, որտեղ տեսական դասընթացը ձմռանը պէտք է տարրուէր Սանասարեան վարժարանում, իսկ գործնական աշխատանքները գարնան ու ամռան ամիսներին՝ բնակավայրերում:

«Միացեալ»-ի գործունէութեան կենտրոնը շուտով դարձաւ Կիլիկիան: Ընդհանուր տեսուչ կարգուեց գիւղատնտես-երկրագործ Միքայէլ Նաթաննեանը (Նանսիի համալսարանի շրջանաւարտ):

¹⁶ Միացեալ ընկերութիւնը հայոց, կոչ հայութեան, Կ. Պոլիս, 1910թ., էջ 4.

¹⁷ Նոյն տեղում, էջ 5:

«Միացեալ»-ի հեռանկարային ծրագրերից մէկը կիւկիա-յում Գիւղատնտեսական վարժապետանոցի բացումն էր, որը պէտք է պատրաստէր գիւղատնտես-երկրագործներ: Ընկերութեան գործունէութեան աշխատանքները համախմբելու նպատակով Տնօրէն ժողովը կ. Պոլսում կազմակերպեց իր կենտրոնական Դիւանը, որը մշտապէս կապի մէջ էր գաւառների հետ, հաւաքում էր անհրաժեշտ տեղեկութիւններ եւ վիճակացոյցեր գաւառի դպրոցների վերաբերեալ, որի չնորհիւ վարժարանները գտնուում էին ընկերութեան տեսադաշտում եւ նրա վերահսկողութեան տակ: Մտնդուեց նաեւ բարձրորակ մասնագէտներից բաղկացած յանձնախումբ, որը կրթական հարցեր քննարկելիս օգնում էր Տնօրէն ժողովին, մասնակցում գիւղատնտեսական գրականութեան, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, նաեւ կրթական ծրագիր-տեղեկագրերի ստեղծման աշխատանքներին:

1880 թուականից «Միացեալ»-ի պատուաւոր անդամներ են եղել Գրիգոր Արծրունին («Մշակի» խմբագրապետ), Յովկհաննէս Այվազովսկին (նկարիչ, Թէոդոսիա), Ջեյմս Բրայը (Անգլիայի դեսպանը Վաշինգտոնում): Աւելի ուշ ընկերութեան պատուաւոր անդամներ դարձան Մկրտիչ Սահասարեանը (Պետերբուրգ), Նիկողայոս Տէր-Ղեւոնդեանը (Թիֆլիս), Սրբուհի Տիւսաբը (կ. Պոլիս) եւ այլք:

«Միացեալ»-ի կրթական ծրագիրը ունէր գիւղատնտեսական-երկրագործական ուղղուածութիւն եւ հետապնդում էր երկակի նպատակ՝ նախ ապահովել ժողովրդի գրագիտութիւնը, ինչպէս պարագացնել սերունդների ինքնագիտակցութիւնը, ինչպէս դա փորձել էր ընդհանուր եւ գեղարուեստական կերպարային գծերով ներկայացնել Բաֆֆին՝ «Կայծեր» ծրագրային վէպում, գծերով ներկայացնել Սահասարեանը՝ «Կայծեր» ծրագրային վէպում, ապահովել տեղին դիմում դպրոցի աշակերտներ կարոյի եւ Սահատկապէս տեղին դիմում դպրոցի աշակերտներ կարոյի եւ Սահագոյի կերպարներում: Նրանք գրապահու լինելուց բացի, ապահունում էին անձնապաշտպանութեանը զէնքով ու պայքարով, միաժամանակ ձգտում էին ամէն կերպ պահել-պահապաննել նաեւ ագգային արժանապատութեան ոգին:

Ինչ վերաբերում է զուտ մանկավարժական բնագաւառ-ուին, ապա այդ առիթով տրուել են դիպուկ բնութագրումներ, այսպէս՝ «Եւ եթէ փորձը անյաջող ըլլայ՝ մեղադրելին Միացեալի ծրագիրը պիտի ըլլայ, այլ այդ ծրագրին իրագործման յանձնառուներու ապիկարութիւնը»¹⁸:

¹⁸ Հայրենիք, կ. Պոլիս, թիւ 1521, 1909թ.:

Բերենք մի հատուած գիւղատնտեսական-երկրագործական վարժարանի կրթական ծրագրից. «Ռւլունք շարել: Ոստայնագործելու վարժութիւններ՝ ծառի ոստերով, ծզօտներով եւ փայտի չերտերով: Կաղապարում կաւով կամ մեղրամամով: Նամակի պահան, պիտակ, քսակ, շինել: Գետինը մաքուր պահել, մոլի խոտերը քաղել, հողը փոցինել: Կաւով կամ գաճով ձեւակերպում գործածական առարկաներու՝ պտուկ, կծուճ, սափոր, պնակ, սկուտեղ, աշտանակ, կանթեղ եւ այլն: Կուտերու եւ կորիզներու խաւ ի խաւ տնկում, խոտահերկ, ցան, հող եւ պարարտութիւնք: Արմատախիլ ընել եւ տնկել, պատուաստ, պատուաստից յետոյ խնամք, յօտել, հականեխում եւ այլն»¹⁹: Այսպէս կարելի է ներկայացնել ծրագրի այլ հատուածներ եւ, բայց բերուածն էլ բաւական է, որպէսզի առաջին հերթին ճիշտ արժէքաւորուի յատկապէս ծրագրի նպատակայարմարութիւնը եւ գործնական ուղղուածութիւնն եւ երկրորդ՝ գիտարկուող շրջանում ըստ ամենայնի գնահատուի նրա հրատապութիւնն ու արդիականութիւնը: Միւս կողմից, եթէ նկատի ունենանք, որ հայ շինականը ձմռան ամիսներին ունէր ազատ ժամանակի կուտակում եւ չգիտեր ժամանակի մէջ ճիշտ եւ արդիւնաւէտ օգտագործելու կերպը, ապա նոր ծրագրով կրթուած գաւառաբնակ հայ մանուկը. «Երբ մեծնայ այդ ժամանակամիջոցը պիտի գիտնար արդիւնաբեր գործի մը յատկացնել եւ նիւթական իրեր արտադրել»²⁰:

Ուշագրաւն այն է, որ «Միացեալ»-ի ծրագիրը ապագայ երկրագործ-գիւղատնտեսի կրթութիւնը չէր սահմանափակում միայն վեց տարուայ գործնական կրթութեամբ, այլ նաեւ նրա առջեւ բացում էր նոր հեռանկարներ եւ կրթութիւնը յետագայում շարունակելու հնարաւորութիւններ: «Միացեալ»-ը իր ծրագրերում նախատեսում էր հայաբնակ գաւառներում բացել նաեւ գիւղատնտեսական-երկրագործական եռամեայ դասընթացներ, որտեղ սովորողները կը ստանային մասնագիտական կրթութիւն: Դասընթացներում նախատեսւում էր տեսական ու գործնական ուսուցմամբ զարգացնել հետեւեալ ճիւղերը, բանշարագշակութիւն, ծառամշակութիւն, այգեմշակութիւն, անտառաբանութիւն, կաթնատնտեսութիւն, գինեգործութիւն, քացախաշինութիւն, նաեւ խորանալ անասնաբուծութեան, մեղուաբուծութեան, չերամապահութեան, հաւաքուծութեան, խոզաբուծու-

¹⁹ Նոյն տեղում:

²⁰ Նոյն տեղում:

թեան, թուչնաբուծութեան, եւ այլ ճիւղերի իմացութեան մէջ: Ընկերութիւնը մշակել էր բաւականաչափ ծաւալուն եւ գործառնական ծրագրեր, որի ճիշտ իրագործման դէպքում իսկապէս Հայաստանում կը ծաղկէր գիւղատնտեսութիւնը, կը զարգանար երկրագործութիւնը եւ դրա հետ մէկտեղ տարէցտարի կը վերանալ նաեւ աղքատութիւնը, թշուառութիւնը եւ մեզ համար արդէն սովորական գարձած՝ «Հայաստան սով կայ» դառը իրողութիւնը: Իսկ սովը այն ժամանակ կը վերացուի, եղր հայ գիւղացին սովորի արդիւնաւորել հողը եւ մշտապէս յիշի հետեւեալ ճշմարտութիւնը՝ «Իրեն օգնող, իրեն պաշտպան ինքն է, իսկ իր գործակիցը՝ մայր բնութիւնը: Բարեգործութիւն մը որ այս ուղղութիւնը չունի՝ բացարձակապէս տնտեսական վատնում մըն է եւ բարոյական անկում»²¹: Եթէ նկատի ունենաք, որ Հայաստանն իր տնտեսութեան զարգացման համար չունի բնական հարստութիւնների զգալի պաշար, ուրեմն նրա զարգացման միակ ճիշտ ուղին, իսկապէս «Միացեալ»-ի նախագծած գիւղատնտեսութեան ու երկրագործութեան զարգացման ուղին էր, որը խոստումնալից էր եւ շատ համոզիչ իր իրատեսութեամբ: Այս տեսակիտը նոր չէր. Հայաստանի տնտեսութեան զարգացման ճիշտ ուղին գիւղատնտեսութեան եւ երկրագործութեան զարգացման մէջ էին տեսնում դեռեւս Խաչատուր Աբովեանը, Նիկողոս Զօրացմանը, Միքայէլ Նալբանդեանը, յետագյում նաեւ Մկրտիչ Խրիմեանը եւ ուրիշներ: Ուրեմն՝ նիւթական թշուառութեան, սովի ու տառապանքի ճանապարհը փակելու համար կար մէկ ուղիղ ճանապարհ: Հայ գիւղացուն, հայ աշխատաւորին սովորեցնել ժրաշան աշխատել եւ բնութեան ընծայած բոլոր միջոցներն արդիւնաւորել, որովհետեւ «Քաղաքակրթութիւնը շատ բաներ, շատ նիւթական իրեր ունենայլու եւ զանոնք շինելու, արտադրել գիտնալու մէջ կը կայանայ»²²:

Երկրագործութեան գերը կարեւորւում էր նաեւ տնտեսապէս զարգացած երկրներում՝ ԱՄՆ-ում, Գերմանիայում, Անգլիայում եւ այլուր: Դրանում համոզուելու համար բերենք ընդամէնը մէկ վիճակագրութիւն. եթէ ԱՄՆ-ի կառավարութիւնը ժթ. դարի վեցերին երկրագործական մասնագիտական դպրոցներին յատկացրել էր ընդամէնը 5 միլիոն դոլար, ապա ի. դարի առաջին տասնամեակին նմանատիպ կրթական հաստատութիւնների

²¹ Նոյն տեղում:

²² Նոյն տեղում:

համար, տրամադրուել էր 18 միլիոն դոլար. Նշենք նաև, որ եթէ դարավերջին երկրագործական դպրոցների ուսնեցած կալուածքների արժէքը կազմում էր 51 միլիոն դոլար, ապա ի. դարի առաջին տասնամեակներին այն կազմում էր՝ 106 միլիոն: Բացի դրանից, եթէ դարավերջին ԱՄՆ-ում երկրագործական վարժարաններում սովորողների թիւը հասնում էր 4000-ի, ապա 1909-1910 թուականներին նրանց թիւն աճել եւ հասել էր 14000-ի²³: Զայտք է մոռանալ մի կարեւոր հանգամանք եւս. ԱՄՆ-ի երկրագործներն ունէին բարձրակարգ որակաւորում, նրանք հմուտ հողագործներ էին եւ նրանց այգիների ու բանջարանոցների մշակումը մեքենայացուած էր:

Հայոց Միացեալ ընկերութիւնը իրագործում էր մարդասիրական կարեւոր ծրագիր՝ Արեւմտահայաստանում եւ Թուրքիայի հայշատ վայրերում իրականացնել տնտեսական ու կոթական բարեփոխումներ: Հետեւելով քաղաքակիրթ երկրների օրինակին՝ «Միացեալ»-ը իր տեսուչների ու ուսուցչական մարմնի ուժերով կազմակերպում էր հրապարակային դասախոսութիւններ բնակչութեան համար: Այդ մասին «Հայրենիք»-ը գրում է. «Մտէ՞ք Անդլիա, մտէ՞ք Ամերիկա, ամենափոքր գիւղի մը մէջ անգամ՝ եթէ ոչ ամէն օր գէթ շաբաթը քանի մը անգամ հրապարակային ձրի դասախոսութեանց ներկայ գտնուելու առիթը պիտի ունենաք»²⁴:

Սովորաբար նման հրապարակային միջոցառումները կազմակերպում էին նախապէս մշակուած յատուկ ծրագրով: Մրահներում եւ դրսում տեղադրտում էին նաեւ շրջիկ գրադարաններ՝ բազմազան գրքերով, որպէսզի ունկնդիրները դասախոսութիւնից յետոյ ոչ միայն հնարաւորութիւն ունենային տեղում ծանօթանալու, այլեւ ընտրելու իրենց ցանկացած գիրքը՝ տանը կարդալու համար: Սա ժողովրդի մէջ ընթերցասիրութեան տարածման շահեկան ձեւերից մէկն էր:

Այսպիսով «Միացեալ ընկերութիւն»-ը հաւատարիմ մնալով ազգային ու քաղաքացիական ինքնագիտակցութեան բարձրացման գաղափարախոսութեանը՝ վերսկսեց կրթալուսաւորական գործունչութեան երկրորդ շրջանը, որը նշանակալից էր գպրոցական ցանցի ընդլայնումով եւ դրանց կառավարման մեթոդական նորամուծութիւններով, ինչն էլ խոր հետք թողեց հայ դպրոցի եւ

²³ Նոյն տեղում:

²⁴ Նոյն տեղում:

մանկավարդութեան պատմութեան տարեգրութեան մէջ, մանաւանդ հայկական կենտրոնագաւառուներում գրագիտութեան, կրթութեան եւ գիտութեան անշէջ լոյսը տարածելու առաքելութեամբ եւ սերուղներին լուսաւոր ու ազգապահպան ոգորումներով դաստիարակելու նպատակառուղղուածութեամբ:

Ինչպէս երեւում է վերը շարադրուածից հայրենասիրական ու բարեգործական ընկերութիւնների կենտրոնական հարցը եղել է մշակութային, մասնաւորապէս, կրթալուսաւորական եւ դպրոցաշխնական ծաւալուն գործունէութիւնը, որը սիրով իրականացրել են արեւմտահայ ազգային գործիչները, գրողները եւ առաջադէմ մտաւորականները ի շնորհիւ, որոնց հայ գալոցցն ու մշակութային կեանքը գտնուել են պատշաճ բարձրութեան վրայ:

Թէպէտ գթասրտութեան ու բարեգործութեան ակունքները հասնում են մինչեւ պատմական հնագոյն ժամանակները, սակայն այդ շարժումը որպէս ինքնուրոյն ուղղութիւն կայացաւ աւելի ուշ լրջանում: Ազգային ազատագրական պայքարի բովում հայ իրականութեան մէջ բարեգործական շարժումը ժթ. դարի երկրորդ կէսին եւ ի. դարի առաջին տասնամեակներին այնպիսի բուռն զարգացում ապրեց, որ դարձաւ հասարակական կեանքի զարթօնքի կենարար, ազդակներից մէկը:

Հայ իրականութեան մէջ գործող ընկերութիւններն ու միութիւնները իրենց առաջ համընդհանուր խնդիրներ դնելով հանդերձ գործել են նաեւ առանձին, մասնաւոր ծրագրերով, սակայն դրանց բոլորի վերջնական նպատակն էր իրենց միջոցներով սատար կանգնել հայ ժողովրդի ազգապահպանման ու ազգակերտման գործին, իրենց շուրջը համախմբել լաւագոյն, կենաունակ ուժեր, նպատակել լուսաւորական-մշակութային վերելքին, աշակցել մատաղ սերնդի կրթութեահճ ու դաստիարակակութեանը, ստեղծել անհրաժեշտ կրուաններ գրականութեան, մամուլի, թատրոնի եւ մշակոյթի այլ ճիշդերի զարգացման համար:

Ներկայումս բարեգործական գործընթացները մտել են նոր փուլ, հետեւաբար անցեալի լաւագոյն աւանդոյթների եւ հարուստ փորձի բացայայտումը, դրանց հանգամանալից վերլուծութիւնները եւ համակողմանի հետազոտութիւնները հզօր խթան կը դառնան հայ ժողովրդի հասարակական, տնտեսական, կրթական ու մշակութային յետագայ զարգացումների համար:

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

The Cultural – Elucidative Activity of Philanthropic Societies in Western Armenia (1850-1920)

SHOGHIK VOSKANYAN

(summary)

Social – economic, public-political and cultural life as well as the significant history of the school, being indivisible and inseparable part of it, became attached with stable foundation with fruitful and productive activities of different associations and societies promoting their activity both in the past and in that particular historical period. Therefore, while investigating and examining thoroughly of the matter of the history of the Western – Armenian school and pedagogical thinking, it is impossible to pass round and circumvent educational services of that important sphere and to disregard its vital role in the noble cause of the development of the school, education and enlightenment. The impetuous and stormy period of the development of the cultural associations is truly considered to be the second half of the nineteenth century when one after another both different associations, social societies were formed and school-building, culture and elucidative prolific activities were stimulated and promoted.

The difficult and arduous task of preserving and protecting school-building was undertaken by progressive and vanguard intelligentsia and young people of Western Armenia who were in the process of forming a powerful system of associations and societies thus giving the opportunity to a broad stratum of society to take from the pious individuals the entrepreneurship for giving a necessary direction to the affairs of school and education thus realizing the public process of it.

The role of philanthropic societies and associations promoting education was especially great in the just cause of establishing and preserving provincial schools. Besides setting up schools they supported financial assistance to the needy and were concerned about the publication, spreading and diffusion of books and textbooks, also about the elimination and wiping out of illiteracy of the unlearned and uneducated adults. They stimulated their activity mainly in those settlements of Turkey, where because of the absence of the Armenian schools the Armenian population had entirely turned into Turkish and Kurdish language speakers.

In the seventeenth of the nineteenth century women's philanthropic- educational societies and associations were founded swiftly, with might and strength. So, in 1879, in Kostandnopolis "Azganver Hayuhys" was established on Zapel Khantchan (Sipil) and a group of pioneering women's own initiative aiming to set up schools and stimulate educational - philanthropic activity. In the same year Srbuhi Tyusab bent every effort to establish "Dprotaser Hayuhys" for the sole purpose of preparing teachers for the Western Armenian provincial schools. For the same purpose different societies were founded in different Armenian regions such as Sebastia, Van, Karin, Kharberd, Kesaria and in other places as well. Cultural- philanthropic societies were also established in such Armenian colonies as India, Egypt, Iran, Bulgaria, France, and Germany and in other countries.

Appraising at its true worth and in proper perspective the role and place of the cultural, educational, philanthropic societies and associations was the good and just deed

of establishing and developing national schools. Due to both longevity of their activity and enthusiastic and inspiring devotion to the noble cause "Azgaser Hayuhats, " "Dprotasir Tiknarts" and "Hayots Miatsyal" associations were notable for the privileges of exercising incomparable impression upon the history of the development of cultural associations. Therefore, the detailed and circumstantial investigation of their history will be auspicious and will create favorable conditions to draw near completion and systematizing the history of the activities of the societies and associations acting in the second half of the nineteenth century. These scrupulous details are of great importance both to the research subject and to the developed and stimulated problem.

This movement as an independent direction was formed later, though the sources of tender – heartedness and benevolence belong to the historical ancient times. In Armenian reality, when the Emancipation movement was at its zenith, the philanthropic movement developed and moved so rapidly that became life-giving and vivifying force of the awake of public life.

The associations and societies acting in Armenian reality acted apart with particular and special plans but at the same time having set a universal task for the sole purpose of supporting and backing the deeds useful and beneficial to the nation consolidating the best and the most viable fortitude and manpower round them being favorable to instructive- cultural advance, progress, promoting the public education and the upbringing of the young generation and laying down the foundation for the development of literature, press, theatre and other branches of culture.

Nowadays the benevolent and philanthropic movement has reached a new phase; consequently the revelation and opening of the best traditions, progressive experiences and their circumstantial investigation will become a stimulating spur for working out social, economic, educational and cultural new policy.